

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ**  
**ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**  
**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**  
(2021թվական)



**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ**  
**ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն, մարզի համայնքներում 2021 թվականի ընթացքում կայացվել է ավագանու 2632, համայնքի ղեկավարի՝ 15164 որոշում:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի՝ 2020 թվականի դեկտեմբերի 1-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2021 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N 1776-Ա հրամանի համաձայն, նախատեսված 17 համայնքներից իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել մարզի 17 համայնքների (Արզնի, Քանաքեռավան, Չարենցավան, Գողթ, Նոր Հաճն, Լեռնանիստ, Առինջ, Քաղսի, Պոռչյան, Կամարիս, Գեղարդ, Մրգաշեն, Գեղաշեն, Նոր Արտամետ, Պտղնի, Հրազդան, Քասախ) ղեկավարների և ավագանիների 2018-2021 թվականների գործունեության նկատմամբ: Քասախ համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մասնագետների հետ համատեղ:

Ընթացիկ տարում կազմակերպվել և անցկացվել է մարզային գորակոչային հանձնաժողովի 9 նիստ, որտեղ քննարկվել են 2020 թվականի ձմեռային և 2021 թվականի ամառային գորակոչերի ընթացքի, արդյունքների ամփոփման և շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ձմեռային և 2021 թվականի ամառային գորակոչերից ազատման ենթակա և տարկետման իրավունքից օգտվելու վերաբերյալ հարցերը:

Կոտայքի մարզային փրկարարական վարչությունում բոլոր համայնքների ղեկավարների հետ համատեղ էլեկտրոնային քարտեզի միջոցով ճշգրտվել են համայնքների լիարժեք ազդարարման համար անհրաժեշտ շջակների քանակը, տեսակը և տեղադրման վայրերը: 2021 թվականին ձեռք է բերվել 53 շջակ, որոնցից 25-ը վերջնական մոնտաժվել են: Վերանորոգվել է 4 հատ շջակ, Արզնի համայնքի կողմից դուրս գրվել 2-ը:

## **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

2021 թվականին ՀՀ Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունը վերահսկողություն է իրականացրել համայնքներում ինքնակամ շինարարությունների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ վերահսկողություն է իրականացվել նաև ՀՏՁՀ-ի պատվիրատվությամբ մարզում առաջնային լուծում պահանջվող խնդիրներին ուղղված շինարարական ծրագրերի իրականացման ընթացքում: Կազմակերպվել են մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքները: Իրականացվել են մարզում գործող ներմարզային 31 երթուղիներում տրանսպորտային միջոցների համալրումներ, փոփոխություններ՝ երթերի քանակները և չվացուցակները հարմարեցնելով ուղևորահոսքին:

## **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Գյուղատնտեսության ոլորտում մարզի 2021 թվականի դրական տեղաշարժերից առանձնապես կարևորվում է փակ գրունտի բանջարեղենի և հատապտղի արտադրության ավելացումը: Ընդհանուր առմամբ ջերմոցների տարածքը կազմում է 122.5 հա, որից՝ բանջարեղենի արտադրություն՝ 71 հա /Ձորաղբյուր, Նոր Գեղի, Հրագդան, Ալափարս, Զորավան, Մրգաշեն/, ծաղկի արտադրություն՝ 35.0 հա /Գողթ/, ելակի արտադրություն՝ 16.5 հա /Նոր Գեղի, Ակունք, Կամարիս/: 2022 թվականին նախատեսվում է կառուցել ևս 32.7 հա ջերմոցային տնտեսություն:

2021 թվականին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է անասնազվիսաքանակի աճ՝ բացառությամբ թռչնի: Մարզում գործում է 18 սպանդանոց, որից 7-ը խոշոր, 11-ը՝ փոքր: Մարզում տրված են պինդ օգտակար հանածոների արդյունահանման 51 թույլտվություններ, որոնցից տարվա ընթացքում շահագործվել են 32-ը: Մարզում առկա ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի /Բջնի, Արզնի և Հանքավան/ տրվել են շահագործման թույլտվություններ՝ շշալցման, բուժական և ածխաթթու գազ ստանալու նպատակներով:

## **ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

2021-2022 ուսումնական տարում մարզային ենթակայության 89 ուսումնական հաստատությունների 1589 դասարաններում սովորում են 36023 աշակերտներ, առաջին դասարան են հաճախել 3885 աշակերտներ: Հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթություն են ստանում 245 աշակերտներ:

Մարզպետարանի և «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ համագործակցության արդյունքում մարզի 15 դպրոցներում գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ:

Մարզային 89 ուսումնական հաստատություններից 84-ում իրականացվել է «Դպրոցական սնունդ» ներդրումային ծրագիրը ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի «Պարենի համաշխարհային ծրագիր» համագործակցությամբ: Այս ծրագրի արդյունքում 14425 տարրական դասարանների աշակերտները և 664 նախակրթարանի սաները ապահովված են ամենօրյա տաք սննդով, իսկ ծնողները ներգրավված են որպես ներդրողներ:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ, «Կանաչ արահետ» ՀԿ-ի կողմից իրականացվել է «Ինտեսիվ պտղատու և հատապտղային» այգիների հիմնում Նոր Գեղիի N1, Բալահովտի, Գեղաշենի միջնակարգ և Բյուրեղավանի հիմնական դպրոցներում:

«Կովկասի և Կենտրոնական Ասիայի ընտրված երկրներում պարենային անվտանգության և սնուցմանն ուղղված կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում Չարենցավանի N6, Աբովյանի N10 հիմնական դպրոցներում հիմնվել են ջերմատներ: Բոլոր այս դպրոցներում տեղադրվել են արևային պանելներ:

Կաթնադրյուրի հիմնական և Ջրառատի միջնակարգ դպրոցների նոր մոդուլային տիպի շենքերի կառուցման աշխատանքները շարունակվում են: Շուրջ 23 դպրոցներում իրականացվել են շինարարական տարբեր աշխատանքներ:

## **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Կոտայքի մարզպետարանի ենթակայության առողջապահական հաստատություններում 2021 թվականի ընթացքում վճարովի բժշկական ծառայություններից գոյացած մուտքերը կազմել են շուրջ 793 մլն 65 հազ դրամ, նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի համեմատ (597 մլն 418 հազ.) վճարովի ծառայություններից դրամական մուտքերի աճ է գրանցվել 195 մլն 647 հազար դրամի չափով, կամ 32,7%:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի ծննդատներում գրանցվել է 1915 ծնունդ, որից 19-ը գույգ:

Մարզում առկա թվով 8 գոհված զինծառայողների ընտանիքներում ծնված երեխաների կապակցությամբ տրամադրվել է դրամական աջակցություն: Դրամական աջակցության է ներկայացվել արցախյան վերջին պատերազմում վիավորում ստացած թվով 2 բժիշկ և 1 բուժակ, ովքեր նաև չեն ստացել պետական այլ աջակցություն: Մարզում առկա է 37 շտապ օգնության մեքենա՝ պարկը համալրվել է ևս 3 հատուկ շտապ օգնության մեքենաներով (Հրազդան-2, Չարենցավան-1): Բուժ հաստատություններին հատկացվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ տրամադրված ընդհանուր թվով՝ 2 շարժական սոնոգրաֆիկ սարք, 40 էլեկտրոնային կշեռք՝ հասակաչափով, 200 հատ պուլսօքսիմետր, 40 շարժական հեմոգլոբինոմետր: Ֆինանսական հոսքերի թափանցիկության նպատակով մարզպետարանի կողմից ձեռնարկվել է հաստատություններում միասնական հաշվապահական ՀԾ ծրագրի ներդրման մեկնարկը: Մեկնարկել են նաև բժշկական թափոնների կենտրոնացված կարգով հավաքագրման գործընթացի ներդրման

աշխատանքները: Մեկնարկել է մարզում խոշորացված համայնքների շրջանակներում բժշկական ամբուլատորիաների միավորման գործընթացի նախագիծը: Մեկնարկել է պետական սուբվենցիոն ծրագրերով համայնքային ենթակայության առողջապահական հիմնարկների շենքային պայմանների արդիականացում: Ընթացքի մեջ են ՀՀ կառավարության որոշման հիմքով Չարենցավանի և Նաիրիի բժշկական կենտրոնների արդիականացման ծրագրերը:

Կորոնավիրուսային վարակի դեմ պատվաստման գործընթացի մեկնարկից առ 21.01.2022թ. կատարված ընդհանուր պատվաստման ցուցանիշը՝ 18 տարեկան և բարձր բնակչության ազգային վիճակագրական տվյալների հիմքով կազմում է 146 831, որից 1-ին դեղաչափ՝ 75 848, (42.9%), 2-րդ դեղաչափ՝ 70 640 (40.0%), և բուստեր՝ 343 դեղաչափ (0.2%):

Բժշկական հաստատություններում իրականացվող ամենօրյա պատվաստումներին զուգահեռ մարզպետարանի կողմից նաև ձեռնարկվել են այլ միջոցառումներ, մասնավորապես ձևավորվել են արտագնա պատվաստումային խմբեր՝ հասցեական պատվաստումներ իրականացնելու, ինչպես նաև մարզի դժվարամատչելի տարածքներում տեղակայված բուժակ մանկաբարձական կետերում /ԲՄԿ/ պատվաստումներ իրականացնելու համար: Հրազդան քաղաքում տեղակայվել է շարժական պատվաստումային կետ: Նշված միջոցառումների և գործարկման ժամակացույցի վերաբերյալ համապատասխան հարթակներով իրականացվում է մշտական իրազեկում: Վերոնշյալ աշխատանքների արդյունքում պատվաստման թիվը /ԲՄԿ/ կազմում է շուրջ 2888:

Մարզպետի որոշմամբ, ձևավորվել է աշխատանքային խումբ՝ կորոնավիրուսային պատվաստումների իրականացման աշխատանքների համար: Պատվաստումային գործընթացում որպես խրախուսում իրականացվող պետական ծրագրի օժանդակության համար Կոտաքի մարզպետի կողմից իրականացվում է հավելյալ այլ միջոցառում, մասնավորապես, բժշկական կազմակերպությունների համար սահմանվել է օժանդակություն՝ միտված հաստատությունների կոմունալ-կենցաղային, բարեկարգման և այլն աշխատանքների կատարմանը, ինչի արդյունքում հանձնարարվել է ներկայացնել նախահաշիվ նմանօրինակ խնդիրների լուծման և այս համատեքստում արդեն իսկ լուծվել է թվով ամենաշատ պատվաստումային ցուցանիշ ունեցող Կապուտանի ամբուլատորիայի կենտրոնացված ջեռուցման խնդիրը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է Արցախյան 44 օրյա պատերազմում զոհված, հաշմանդամ դարձած և անհայտ կորած զինծառայողների ընտանիքների փաստաթղթերի հավաքագրում և սահմանված կարգի համաձայն ներկայացվել ՀՀ ՊՆ: 2021 թվականի դեկտեմբեր ամսին Արցախից տեղահանված ընտանիքներին Պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում տրամադրվել է սննդային արկղեր՝ թվով 2700 անձանց, ինչպես նաև նույն ամսում Հայկական Կարմիր խաչ ընկերության կողմից պարենային փաթեթներ՝ թվով 333 ընտանիքների:

## **ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերի համար 2021թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել էր 620523.5 հազար դրամ, ճշտված պլանը՝ 556835.8 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 553498.45 հազար դրամը, կամ 99,4%-ը, իսկ տնտեսված գումարը՝ 3337.35 հազար դրամը գոյացել է էներգետիկ և կապի ծառայություններ, գործուղման ծախսեր հոդվածներից:

Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման համար 2021թ. ՀՀ պետական բյուջեից նախատեսվել էր 153300.0 հազար դրամ, որից ծախսվել է 153160.1 հազար դրամը: Չծախսված 139.9 հազար դրամը վերադարձվել է պետական բյուջե:

Մշակութային ծրագրերի գծով 2021թ. բյուջեով պլանավորվել էր 4924.0 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 2914.71 հազար դրամ, Չծախսված 2009.7 հազար դրամը համաճարակի պատճառով չանցկացված մշակութային միջոցառումների համար նախատեսված գումարն է: Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային-փողային և լարային նվագարանների գծով ուսուցում ծրագրով նախատեսված 55146.6 հազար դրամից ծախսվել է 27574.3 հազար դրամ, քանի որ ՀՀ կառավարության որոշմամբ մնացած 27572.3 հազար դրամը փոխանցվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ: Կրթական ծրագրերի գծով 2021թ. ՀՀ պետական բյուջեից նախատեսվել էր 7.416.406.4 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 7.336.119.3 հազար դրամը, կամ տնտեսումը կազմել է 80.207.1 հազար դրամ: Տարվա կտրվածքով մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրումը վեց հարկատեսակների գծով ապահովել է բարձր ցուցանիշ՝ տոկոսներով արտահայտված, կատարողականը կազմել է 109.4 տոկոս:

Զարգացման, ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին. 2021թ. պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով Կոտայքի մարզի 30 համայնքների կողմից ներկայացվել է համայնքների սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 89 ծրագրի փաթեթ՝ ընդհանուր 6.9 մլրդ. դրամ արժեքով: Հաստատված 89 ծրագրից 87-ի պայմանագրերը կնքվել են, որից 49 ծրագրի աշխատանքներն ավարտվել են, 37-ը ընթացքի մեջ են (2-ը ավարտական փուլում), 1 ծրագիր դեռ չի մեկնարկել:

Ավելի քան 20 բնակավայրերում շուրջ 27 սուբվենցիոն ծրագրերով կապիտալ ասֆալտապատվում են ներհամայնքային ճանապարհներ, հիմնանորոգվում և բարեկարգվում բակային հատվածներ: Միայն 4 ծրագիր ուղղված է Ջրվեժ, Հրազդան, Աբովյան համայնքներում մանկապարտեզների կառուցմանը, վերակառուցմանն ու վերանորոգմանը:

Կառավարության ֆինանսական աջակցության միջոցով 2021 թվականին շահագործման են հանձնվել Մայակովսկիի և Գեղադիրի մանկապարտեզները: Շատ երկար տարիներ Գեղադիր համայնքում մանկապարտեզ չէր գործել: Այն կապիտալ վերանորոգվել էր առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրերով իսկ 2018 թվականին Տարածքային Զարգացման Հիմնադրամի և մասնավոր ներդրողների կողմից ձեռք էր բերվել գույքը, ինչի

արդյունքում մանկապարտեզը վերաբացվել էր, ապա որոշ ժամանակ գործելուց հետո փակվել էր ֆինանսական խնդիրների պատճառով: Ինչ վերաբերում է Մայակովսկիի մանկապարտեզին, այն ևս վերջին տարիներին տարբեր ծրագրերով հիմնանորոգվել էր, ձեռք բերել գույքը և ֆինանսական խնդիրների պատճառով անգործության մատնվել:

### **ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ Կոտայքի մարզպետարանում 2021 թվականի փաստաթղթաշրջանառությունը կազմել է 25686 փաստաթուղթ, որից՝ 1775-ը դիմումներ քաղաքացիներից: Հանդիսանալով Կոտայքի մարզպետարանի կարիքների համար բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող գնումների համակարգող՝ իրականացվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործառույթներ:

### **ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ**

2021 թվականի ընթացքում Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի կողմից ստուգանշվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 513 որոշումներ, գլխավոր քարտուղարի 626 հրամաններ: Ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 42 համայնքների ավագանիների թվով առնվազն՝ 2632 որոշումներ, համայնքների ղեկավարների՝ 15164 որոշումներ, արձանագրված թերությունների վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկություններ՝ գործող օրենսդրությանը համապատասխանեցնլու վերաբերյալ:

### **ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**

2021թ. պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով Կոտայքի մարզի 30 համայնքների կողմից ներկայացվել է համայնքների սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 89 ծրագրի փաթեթ՝ ընդհանուր 6.9 մլրդ. դրամ արժեքով: Հաստատված 89 ծրագրից 87-ի պայմանագրերը կնքվել են, որից 49 ծրագրի աշխատանքներն ավարտվել են, 37-ը ընթացքի մեջ են (2-ը ավարտական փուլում), 1 ծրագիր դեռ չի մեկնարկել:

Ավելի քան 20 բնակավայրերում շուրջ 27 սուբվենցիոն ծրագրերով կապիտալ ասֆալտապատվում են ներհամայնքային ճանապարհներ, հիմնանորոգվում և բարեկարգվում բակային հատվածներ: Միայն 4 ծրագիր ուղղված է Ջրվեժ, Հրազդան, Աբովյան համայնքներում մանկապարտեզների կառուցմանը, վերակառուցմանն ու վերանորոգմանը:

Կառավարության ֆինանսական աջակցության միջոցով 2021 թվականին շահագործման են հանձնվել Մայակովսկիի և Գեղադիրի մանկապարտեզները: Շատ երկար տարիներ Գեղադիր համայնքում մանկապարտեզ չէր գործել: Այն կապիտալ վերանորոգվել էր առաջնահերթ

լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրերով իսկ 2018 թվականին Տարածքային Ջարգացման Հիմնադրամի և մասնավոր ներդրողների կողմից ձեռք էր բերվել գույքը, ինչի արդյունքում մանկապարտեզը վերաբացվել էր, ապա որոշ ժամանակ գործելուց հետո փակվել էր ֆինանսական խնդիրների պատճառով: Ինչ վերաբերում է Մայակովսկիի մանկապարտեզին, այն ևս վերջին տարիներին տարբեր ծրագրերով հիմնանորոգվել էր, ձեռք բերել գույքը և ֆինանսական խնդիրների պատճառով անգործության մատնվել:

## **ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ-ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

2021 թվականին հողային հաշվեկշռի համաձայն, մարզի ընդհանուր տարածքը կազմում է 209 223.2 հա, որից 155070,7 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր են. Դրանք կազմում են հանրապետական նմանատիպ հողերի շուրջ 7,5 տոկոսը:

## **ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**

Այս պահին Կոտայքի մարզի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց մարզային շտեմարաններով հաշվառված են 109 ԱԾԽՄ երեխաներ և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձինք, ԱԾԽՄ 2 երեխա խնամվում է խնամատար ընտանիքում: Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի կողմից տրված եզրակացությունների հիման վրա մանկատուն է տեղավորվել 1 երեխա, դուրս է գրվել 3 երեխա: «ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ ծրագրային քաղաքականության իրականացման Կոտայքի մասնաճյուղի կարճաժամկետ ծրագրով 2021թ. ընթացքում հաստատություն է տեղավորվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3 երեխա, ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության հիմնադրամ» կենտրոն՝ 4 երեխա և «Երևանի «Ջատիկ երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ՝ 16 երեխա:

## **ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ**

**Մարզպետարան (հանրային ծառայություն և աշխատանքային հարաբերություններ)**

2021 թվականին ՀՀ Կոտայքի մարզպետի կողմից ընդունվել են 513 որոշումներ, իսկ գլխավոր քարտուղարի կողմից՝ 626 հրամաններ: ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2021 թվականի հաստիքացուցակում առկա են 100 հաստիքներ (պաշտոններ), որից 4-ը վարչական պաշտոններ են, 7-ը՝ հայեցողական պաշտոններ, 77-ը քաղաքացիական ծառայության պաշտոններ, 7-ը՝ քաղաքացիական աշխատանք կատարողի պաշտոն և 5-ը՝ տեխնիկական

սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններ: Պաշտոնի են նշանակվել 25 անձ, որից 1-ը՝ վարչական, 8-ը՝ հայեցողական, 15-ը քաղաքացիական աշխատանք կատարողի և 1-ը՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններում: Պաշտոնից ազատվել են՝ 20 անձ, որից 2-ը՝ վարչական, 7-ը՝ հայեցողական, 8-ը քաղաքացիական աշխատանք կատարողի և 3-ը՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններից:

### **Քաղաքացիական ծառայություն**

ՀՀ Կոտայքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առկա են քաղաքացիական ծառայության 77 պաշտոններ, որից 13-ը թափուր են: Կայացել են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 9 մրցույթներ, որից 8-ը արտաքին և 1-ը ներքին մրցույթներ: Պաշտոնների են նշանակվել 9 քաղաքացիական ծառայողներ: 2 քաղաքացիական ծառայողի պաշտոնավարման ժամկետը երկարաձգվել է մեկ տարի ժամկետով: Պաշտոններից ազատվել են 41 քաղաքացիական ծառայողներ՝ 24-ը անձնական դիմումի համաձայն, 2-ը քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալու հիմքով (66 տարեկան), 14-ը հաստիքների կրճատման հիմքով (ՄԱՏԳ-ներ) և 1-ը ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացմամբ: Վերապատրաստվել են 64 քաղաքացիական ծառայողներ: Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կնքված 8 ժամկետային աշխատանքային պայմանագիր լուծվել է:

## **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

### **ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ**

2021 թվականի ընթացքում կատարվել է մարզպետարանի կողմից իրականացվող նախաձեռնությունների, աշխատանքային խորհրդակցությունների, մարզպետի, փոխմարզպետերի, մարզպետարանի պաշտոնատար անձանց հանդիպումների, քննարկումների, աշխատանքային այցելությունների, ինչպես նաև մարզի համայնքներում տեղի ունեցած իրադարձությունների, միջոցառումների լուսաբանման աշխատանքներ (շուրջ 800 թողարկում):

2021 թվականի ընթացքում կազմակերպվել է զանգվածային լրատվության ներկայացուցիչների հետ Կոտայքի մարզպետի, հարցազրույցներն ու հանդիպումները: Ապահովել է օրենսդրությամբ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը տարին առնվազն մեկ անգամ: Մարզպետարանի պաշտոնական կայքում պարբերաբար տեղադրվել են մարզպետի որոշումները համայնքների ղեկավարների և ավագանու որոշումները:

## **ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**

2021 թվականի ընթացքում ամենամսյա պարբերականությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ՀՀ անվտանգության սպառնալիքների և դրանց դեմ իրականացվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն: 2021 թվականի ընթացքում բաժինը մշտապես համագործակցել է տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի այլ ստորաբաժանումների հետ: